ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Գյումրու թիվ 38 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Կատարող՝ Գոհար Հակոբյան Համազասպի

/անուն, ազգանուն, հայրանուն/

«Գյումրու թիվ 4 հիմն. դպրոց »ՊՈԱԿ աշխարհագրության ուսուցիչ

/դպրոց, մասնագիտությունն ըստ վերապատրաստման խմբի/

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

/անուն,ազգանուն /

ԳՅՈՒՄՐԻ 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ——————————————————————3
2. ա/ Բնապահպանական մտածողության դերն ու նշանակությունը:—4
բ/ Բնապահպանական կրթության ու դաստիարակության դերն ու նշանակությունը քաղաքացիական հասարակության կայացման գործում:
4. Էկոլոգիական գիտակցության ձևավորման խնդիրները, մեթոդները միջոցները:——————————————————————10
5. Էկոլոգիական դաստիարակությունը , որպես մարդու համակողմանի զարգացման բաղադրամաս: ——————————13
6. Բնապահպանական ուսուցման կազմակերպման ձևերը, մեթոդներն ու եղանակները: ——————————————————————15
7. Եզրակացություն——————————————————————18
8. Գրականություն——————————————————————19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդը գոյատևում և ապահովում է հասարակական առաջընթացը օգտվելով շրջակա բնությունից օգտագործելով նրա ռեսուրները : Դրա շնորհիվ հասարակության և շրջակա բնության միջև մշտական նյութափոխանակություն է կատարվում մարդը մշտապես բնությունից ինչ-որ բան վերցնում է և ինչ- որ բան տալիս: Մարդկանց վերաբերմունքը բնության նկատմամբ սպառողական է: Մարդկանց միջամտությունն այսօր բնական միջավայրի վրա ցավոք այնպիսի ծավալների է հասել , որ նրա ինքնազարգացման ընթացքը խախտվել է: Եթե բնօգտագործման և բնական միջավայրի աղտոտման ներկա ուղղվածությունն ու տեմպերը պահպանվեն , ապա հարյուրամյակներ գուցե և տասնամյակներ հետո մեր մոլորակն այլևս պիտանի չի լինի բնակության համար : Մարդկային հասարակության ինքնառչնչացման վտանգը կդառնա իրական: Այդ գիտակցությամբ էլ մարդիկ ամբողջ աշխարհում լուրջ ջանքեր են գործադրում բնական միջավայրի հետագա վատթարացումը կանխելու և մարդկությանը փրկելու համար:

Բնության պահպանությանը մասնակցում են նաև դպրոցականները: Հարցն այդպես է դրված.

-Եթե ուզում եք, որ մեր մոլորակը և ժողովուրդները գոյատևեն, ապա յուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր դեռահաս, պատանի, երիտասարդ շրջակա միջավայրի պահպանությունը պիտի դարձնի իր սուրբ պարտականությունը:

Մարդու աշխատանքային գործունեության հետևանքով շրջակա միջավայրը կարող է խաթարվել երկու դեպքում.

ա) երբ մարդը բնությունից կորզում և օգտգործում է ոչ այնքան, որքան կարելի է, և ոչ այնտեղ,որտեղ կարելի է,

բ) Երբ մարդը բնությանն է վերադարձնում արտադրության այնքան թափոններ և այնքան քանակով,որ բնությունը չի հասցնում ‹‹մարսել››, այսինքն չի կարողանում ինքնամաքրվել: Երկու դեպքում էլ տեղի է ունենում էկոլոգիական ճգնաժամ,ապա նաև աղետ:

Շրջակա միջավայրի պահպանությանը իրենց գործուն մասնակցությունը պետք է ունենան ՝ դպրոցը, ընտանիքը և ողջ հասարակությունը: Այս գործում մեծ է հատկապես դպրոցի դերը, քանի որ այստեղ է իրագործվում կազմակերպված, պլանավորված դաստիարակու

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բնությունը կատակներ չի ճանաչում

Նա միշտ արդարացի է ,

Միշտ լուրջ է ,

Միշտ խիստ է,

Նա միշտ ճշմարտացի է .

Սխալներն և մոլորությունները

Մարդկանցից են բխում :

Գյոթե

Բնապահպանական կրթությունն ու դաստրարակությունը ցանկացած հասարակության զարգացման կարևորագույն գերակայություններից են՝ անկախ նրա քաղաքական վարչակարգից և տնտեսական կացութաձևից: Մեր ժամանակներում բնապահպանությունն առնչվում է մարդու գործունեության գրեթե բոլոր ոլորտների հետ և այսօր անտեսել բնապահպանական կրթությունն ու դաստիարակությունը՝ նշանակում է անտեսել ապագան, հարցականի տակ դնելով սերունդների գենոֆոնդը: Մերօրյա ինֆորմացիոն հասարակության և գիտատեղնիկական բուռն առաջընթացի պայմաններում բնապահպանական կրթությունը գնալով էլ ավելի արդիական նշանակություն է ստանում և դառնում մարդկության լուրջ մտահոգություններից մեկը:

Այսօր պահանջ կա ստեղծել շարունակական բնապահպանական կրթության և դաստիարակության համամարդկային մի համակարգ, որի նպատակը կլինի հասարակության մեջ ձևավորել բնապահպանական մտածողության մշակույթ: Բնապահպանական մտածողությունը բնության վրա անհատի գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման ընդունակությունն է : Անհրաժեշտ է գնահատել մարդու գործունեության ոչ միայն ուղղակի ազդեցությունը, այլ նաև դրանից բխող հետևանքները, որոնք կարող են զգացնել տալ նույնիսկ մի քանի հարյուրամյակ հետո: Բնապահպանական կրթությունն ու դաստիարակությունը բնական ճգնաժամերից խուսափելու և դեպի կայուն զարգացման անցում կատարելու եթե ոչ միակ , ապա գոնե ամենաարդյունավետ և քիչ ծախսատար եղանակն է:

Բնապահպանական կրթությունն ու դաստիարակությունը բազմակողմանի մի գործընթաց է , որն իր մեջ ընդգրկում է ոչ միայն բնապահպանական դասընթացներ, այլ նաև աշխարհաճանաչողական , բարոյահոգեբանական , գեղագիտական , քաղաքական և միջազգային նկատառումներ: Այսօրվա քաղաքացու աշխարհայացքի ձևավորման գործում անգնահատելի դեր ունեն բնապահպանական կրթությունն ու դաստարակությունը, որոնք որպես կրթության ընդհանուր բաղադրիչներ , նպաստում են աշակերտների մեջ մարդ-բնություն համամիասնության ձևավորմանն ու ներդաշնակ զարգացմանը, ինչպես նաև այդ փոխհարաբերությունների գիտական հիմնավորմանը: Բնապահպանության գլխավոր նպատակն է սովորողների մեջ ձևավորել գիտելիքների, հայացքների ու համոզմունքների մի ամբողջություն որն ուղղված է շրջակա միջավայրի նկատմամբ անհատի բարոյական պատասխանատվության ձևավորմանը, ինչպես նաև ցանկացած գործունեության ժամանակ բնության նկատմամբ մշտական խնամքի անհրաժեշտության գիտակցմանը: Անհրաժեշտ է պատանեկան հասակից մարդու գիտակցության մեջ դաստիարակել այն միտքը, որ մեր մոլորակի օրգանական աշխարհը մեկ ամբողջություն է , որտեղ ամեն ինչ կարևոր է և անհրաժեշտ , և դրանց արժեքը ոչ մի կերպ չի կարելի չափել ըստ դրանց պետքականության : Թեկուզ միայն այն պատճառով, որ մենք դեռևս շատ քիչ բան գիտենք բնության մասին:

Բնապահպանական կրթության ու դաստիարակության դերն ու նշանակությունը քաղաքացիական հասարակության կայացման գործում

Դարեր շարունակ մարդն անխնա շահագործել է բնությունը՝ համոզված լինելով որ այն անսպառ է : Հատկապես վերջին մի քանի տարիներին տնտեսության ճգնաժամային պայմանների պատճառով բնական պաշարների անխնա , ոչ խելամիտ օգտագործումը նպաստեց շրջակա միջավայրի կրկնակի աղտոտմանը: Անտառածածկ տարածքների հատման , արդյունաբերության կողմից կատարվող արտանետումների հետևանքով շրջակա միջավայրում հայտնվեցին տարբեր թափոններ և արտանետումներ որոնք հիմնականում թունավորում և կործանիչ ազդեցություն են թողնում կենսոլորտի վրա , միաժամանակ աղտոտելով օդը, հողը ,

ջուրը: Բնության մեջ ներկայումս առկա են արհեստականորեն սինթեզված բազմաթիվ նյութեր , որոնք քայքայման չեն ենթարկվում: Բնության մեջ հսկայական կուտակումներ է առաջացնում կենցաղային աղբը , որը ի վիճակի չեն քայքայելու միկրոօրգանիզմները: Դրանք այրելն անթույլատրելի է , քանի որ այս դեպքում կգոյանան քաղցկեղածին և վնասակար այլ նյութեր: Գյուղատնտեսության մեջ վնասատուների դեմ պայքարելու նպատակով օգտագործվում են զանազան թունաքիմիկատներ , որոնց ազդեցությունը ժամանակի ընթացքում դառնում է պակաս արդյունավետ , որովհետև վնասատուները հարմարվում են դրանց ազդեցությանը : Թունաքիմիկատների կիրառումը խիստ վտանգավոր է ոչ միայն բուսական , կենդանական շատ տեսակների , այլև մարդկանց համար, քանի որ թույները հաճախ կուտակվում են առանձին սննդամթերքների մեջ և սննդի հետ միասին անցնում են մեր օրգանիզմ: Այդ պատճառով էլ վերջին 10-15 տարիների ընթացքում ՀՀ-ում ավելացել են ալերգիկ և քաղցկեղային հիվանդությունների քանակը , նվազել է ծնելիության տոկոսը և կյանքի ընդհանուր տևողությունը:

Մարդը պետք է լավ ճանաչի շրջակա աշխարհը , բնությունը , քանի որ նրա մի մասնիկն է և հազարավոր թելերով կապված է նրա հետ: Դա հատկապես կարևոր է այժմ , երբ գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում ակամայից անցանկալի հակասություն է առաջացել մարդու և բնության միջև, սկսվել է մարդու գործունեության հետևանքով բնական ռեսուրսների սպառման , բազմաթիվ բուսատեսակների , կենդանատեսակների թվի կրճատում: Կրճատվել են նաև անտառատարածքները ջրային ռեսուրսները:

Համաշխարհային մասշտաբով հսկայական չափեր է ընդունել ջրի հողի, աղտոտումը նավթամթեքրներով : Մարդկությանը արդեն լուրջ հիմնախնդիր է պատճառում ատոմակայանների ռադիոակտիվ թափոնները, ատոմային զենքի ստորջրյա և ստորգետնյա փորձարկումները : Բնության վրա մարդու կողմից անհեռատես , ոչ խելամիտ , սպառողական մոտեցման և բացասական ներգործության շարքը կարելի է շարունակել: Պատճառը մարդու ոչ խելամիտ տնտեսական գործունեությունն է բնության մեջ: Բնության գոյատևման և զարգացման օրինաչափությունների չգիտակցելն է:

Այստեղ պետք է օգնության գա հասարակության բնապահպանական գիտակցությունը, մի գիտություն, որը հնարվորություն է տալիս լավ պատկերացնել կենդանի օրգանիզմների գոյության պայմանները , օրգանիզմների միմյանց և միջավայրի հետ ունեցած փոխհարաբերությունները:
Կյանքը ցույց է տալիս որ մեր առօրյայում ավելի կարևոր տեղ է սկսում զբաղեցնել բնությունը , իրականում ինչպես որ պետք է լիներ: Սակայն , ցավոք դեռևս մեր հասարակությունում չկա այն գիտակցությունը , որ յուրաքանչյուր քաղաքացի հանդիսանում է բնության մի մասնիկ և պարտավոր է հենց իր իսկ առողջության համար հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության համար: Շրջակա միջավայրի պահպանության բնագավառում կայացված քաղաքական որոշումների կատարման համար ուղղակի բավարար չէ ազգաբնակչության բնապահպանական գիտակցության ու մշակույթի մակարդակը, կրթական համակարգում բնապահպանությանը հատկացված ուշադրությունն ու ժամերի քանակը, բնապահպանական ոլորտի օրենքների և դրանց կատարման կառուցակարգերի պարզ իմացությունը: Անհրաժեշտ է այսօրվա քաղաքացու մեջ մշակել նոր արժեքներ , ունակություններ և գիտելիքներ , զարգացնել բնապահպանական գիտակցությունն ու մշակույթը , բնապահպանական ծրագրերում և կարևորագույն որոշումների կայացման գործում ապահովել հասարակության ներգրավվածությունն ու մասնկցությունը: Բնապահպանական կրթությունն ու դաստիարակությունը տարեցտարի առավել կարևոր բնույթ է կրում և այն աստիճանաբար դառնում է քաղաքացիական հասարակության կայացման կարևորագույն նախապայմաններից մեկը:
Դա կարելի է բացատրել այն պարզ պատճառով , որ քաղաքացիական հասարակությունը հասարակության ավելի կազմակերպված ձևն է , որն ի վիճակի է որոշակի նպատակի շուրջ համախմբվելու , իսկ բնապահպանական հիմնախնդիրներն այսօր այնքան են հասունացել , որ յուրաքանչյուրի անհատական մոտեցումից բացի պահանջվում է նաև նպատակային , կազմակերպված հասարակական մոտեցում:
Բնության հետ փոխհամաձայնության բնույթը սահմանվում է <<էկոլոգիական հրամայականով>>: Բնությունն այն ամենն է ինչ բնական է , ընկալվում է որպես մարդու հետ փոխհամաձայնության լիիրավ սուբյեկտ: Բնության պահպանությունը

թելադրված է բնապահպանության անհրաժեշտությամբ: Բնապահպանությունը գիտություն է , որը էկոլոգիայի տեսական նախադրյալների հիման վրա , գործնական միջոցառումներ է մշակում , բնական հարստությունների պահպանության և արդյունավետ օգտագործման համար: Բնապահպանությունը նաև համալիր գիտություն է բնական էկոհամակարգերի բարելավման , բնության հասարակության հավասարակշռության պահպանության մասին: <<Բնապահպանություն >> գիտության նպատակն է կենդանի և անկենդան բնության որակական և քանակական օրինաչափությունների պահպանությունը որպես մեր մոլորակի կարևոր բաղադրամաս: Եթե տեխնոկրատական վերաբերմունքը չփոխվի և շարունակվի բնության անողոք շահագործումը , եթե չհաղթանակի էկոբարոյականությունը , ապա մարդուն սպասվելիք բազմաթիվ աղետներից ամենավտանգավորը կարող է դառնալ մարդու բովանդակության աստիճանական կորուստը : Ներկայումս մարդկության առջև ծառացած ամենաբարդ և ամենակարևոր հիմնախնդիրը բնության և հասարակության դինամիկ հավասարակշռության պահպանությունն է: Այսօր հարցն այսպես է դրված կամ մարդը կկարողանա պահպանել այդ դինամիկ հավասարակշռությունը , կամ նրա մեղքով կվերանան բնական համալիրները / անտառները, տափաստանները լճերը , գետերը / և կվերանա նաև մարդը: Կենսոլորտի զարգացման պատմության ընթացքում , երբք բնությունը չի ենթարկվել այնպիսի անողոք հարձակման ինչպես վերջին 50-60 տարում: Բնական համալիրների քայքայումը աղետալի է նաև մեր հանրապետությունում: Այսօր նույնիսկ դժվար է կանխագուշակել , թե մարդուն վրա հասնող աղետը առաջինը որտեղից կարող է գալ օզոնային շերտի քայքայումից, որը Երկիրը ուլտրաանուշակագույն ճառագայթներից պաշտպանվող վահանի դեր է կատարում, թե՝ Երկրի ջերմոցային էֆէկտից ու համաերկրային ջերմաստիճանի բարձրացումից, որը սպառնում է Համաշխարհային օվկիանոսի մակարդակի բարձրացում և աղետալի ջրհեղեղներ , Երկրի ջրոլորտի աղտոտումից որն այսօր վերածվել է աղբանոցի , թե՝անտառների հատումից ինչպես նաև Երկրի վերին շերտի հողի քայքայումից : Այս ամենը կարող են մարդու համար աղետալի հետևանքներ ունենալ:

Ոռոգելով անապատները, չորացնելով ճահիճները, փոխելով գետերի հոսանքը, մարդը փոխում է նաև կյանքի կլիմայական պայմանները: Կլիմայի վրա անուղղակի ազդեցություն է թողնում նաև արտադրությունը, քանի որ նավթի, ածխի ու տորֆի այրման ժամանակ տարեկան մթնոլորտ է բարձրանում մոտ 1.5 միլիարդ տոննա ածխածին, իսկ օդում ածխածնի պարունակությունից է կախված երկրի մակերեսի ջերմությունը: Օդը, գետերը, ծովերը գնալով ավելի մեծ չափերով են աղտոտվում, հողը թունավորվում է քիմիկատներով, անտառներն ու կենդանական աշխարհը կործանվում են մոնոպոլյաների տիրապետության հետևանքով: Արդյունաբերական ձեռնարկությունները գետերը, լճերն ու ծովերն են թափում հարյուրհազարավոր տոննա քիմիական զանազան նյութեր ու նավթամթերքներ: Դրա հետևանքով ջրերը աստիճանաբար կորցնում են թթվածինը, որը հանգեցնում է կենդանական աշխարհի ոչնչացմանը:

Օդի, ջրի աղտոտվելը, արդյունաբերական մնացուկները, ռադիոակտիվ նյութերն ու այլ նյութեր սպառնալիք են ստեղծում մարդու գոյության համար: Մարդը պետք է ապրի բնության հետ լիակատար համաձայնության և համերաշխության մեջ, պետք է զգուշանա բնության չափազանց լիակատար և ամբողջական վերափոխումից և օգտագործումից, քանի որ դա կարող է հետագայում բացասաբար անդրադառնալ նրա էկոլոգիայի վրա:

Յուրաքանչյուր մարդ պատասխանատվություն է կրում բնության պահպանման համար, քանի որ ամեն մեկը իր հնարավորությունների և ուժերի սահմաններում կարող է աջակցել բնության թեկուզ շատ աննշան մի անկյան պահպանմանը և բազմացմանը: Վերջին հաշվով մարդկանց անհատական ջանքերի գումարից է կախված բնության պահպանումը և մարդու գոյության համար բնական միջավայրի ապահովումը: Իրավացի է ասված, որ մադու համար բնությունը և արհեստանոց է, և տաճար,իսկ մարդը նրանում և ակտիվ աշխատավոր է, և հրապուրված պաշտող: Նվաճելով բնությունը մարդը պետք է ամեն կերպ ձգտի ոչ թե ոչնչացնել բնությունը, այլ իրականացնել մարդկության երազանքը՝ լիակատար ներդաշնակության մեջ մտնել բնության հետ:

Էկոլոգիական գիտակցության ձևավորման խնդիրները, մեթոդները և միջոցները

«Էկոլոգիական գիտակցություն» հասկացության ներբովանդակային բնութագիրը փորձել են տալ ռուս գիտնականներ Ս.Դ. Դերյաբոն, Ե.Խ. Եվտուշենկոն, Ի.Դ. Զվերևը և ուրիշներ: Նրանցից յուրաքանչյուրը տվել է «էկոլոգիական գիտակցություն» հասկացության առանձին բաղադրիչների գիտական բնութագրումը, սակայն մինչ այսօր, դեռևս այդ հասկացությանը լիարժեք սահմանում չի տրված, և հիմնահարցը կարիք է զգում խոր գիտական բացահայտման:«Էկոլոգիական գիտակցություն» հասկացությունը կարևոր աշխարհայացքային դեր է կատարում:

Երկար տարիների մանկավարժական փորձից և գիտական հետազոտությունների արդյունքներից՝ փորձենք տալ «Էկոլոգիական գիտակցության» հասկացության սահմանումը: Էկոլոգիական գիտակցությունը հոգեկան երևույթ է, որը իրենից ներկայացնում է անձի՝ «մարդ-բնություն-հասարակություն» հարաբերակցության, նրանց բազմաբնույթ կապերի, շարժման ու փոխներգործության օրենքների օրինաչափությունների մասին գիտելիքների, հայացքների, համոզմունքների համակարգը և որը հիմք է ծառայում բարոյական վարքի արժեքային դիրքորոշումների, բնության ընկալման, բնապահպանական ու բնաճանաչողական ընդունակությունների, վարքագծի ձևավորման համար: Էկոլոգիական գիտակցությունը ձևավորվում է ոչ միջնորդավորված՝ տարերայնորեն և միջնորդավորված՝ նպատակադրված դաստիարակության ու կրթության միջոցով:

Անձնային տեսանկյունով՝ էկոլոգիական աշխարհայացքը ձևավորվում է անձի էկոլոգիական գիտակցության ձևավորման և նրա կողմից էկոլոգիական կուլտուրայի յուրացման գործընթացում, որը հիմնված է մարդու կողմից «հասարակություն-բնություն» համակարգում իր տեղի և նրա դիալեկտիկական զարգացման իմացության վրա, և որպես հոգեկան արտակարգ երևույթ՝ անմիջապես կապված է սուբյեկտի սոցիալական գործունեության հետ:

Էկոլոգիական բնույթի գործողություններում մարդու մոտ ձևավորվում են աշխարհի մասին ընդհանուր պատկերացումներ, որոնց շնորհիվ նա ճշգրտում է իր տեղը բնության մեջ: Այս գործընթացում կարևոր դեր է խաղում անձի «մարդ-բնություն-հասարակություն» համակարգի մասին եղած հայացքների համակարգը, որտեղ վճռական և կարգավորող

գործոնը անհատի արժեքային վերաբերմունքն է: Բնության և հասարակության միջև եղած ներդաշնակ հարաբերությունների ձևավորումը պահանջում է ներդաշնակ զարգացած անհատի դաստիարակությունը, որը իր հերթին պահանջում է աշխարհայացքի էկոլոգիականացում:

Էկոլոգիական դաստիարակության գործընթացի իրականացման համար կարևոր դեր է խաղում անձի ակտիվ կենսադիրքորոշումը, որը միայն բնության մասին եղած որոշակի հայացքների միասնությունը չէ, այլ գոյություն ունի հարցի առարկայական կողմը, և այն անառարկելիորեն առնչվում է մարդու անմիջական գործունեության հետ՝ կապված «մարդ-բնություն-հասարակություն» համակարգում եղած փոփոխությունների օպտիմալացման հետ:

Բնության պահպանության կարողությունների և հմտությունների ձևավորումը իր մեջ դաստիարակչական մեծ բովանդակություն է պարունակում:

Էկոլոգիական դաստիարակության կարևոր գործոն է համարվում նաև անձի կողմից բնության և հասարակության փոխհարաբերության՝ սոցիալ-էկոլոգիական իդեալի ըմբռնումը, որն իր հերթին ենթադրում է բարոյակամային որակների, համոզմունքների, բնության նկատմամբ պատասխանատվության ձևավորում: Էկոլոգիական դաստիարակության խնդիրը բազմասպեկտ է (բազմատեսանկյուն), և նրա բացահայտման մեթոդաբանական հիմքը համարվում է աշխարհայացքը: Հաշվի առնելով բնակլիմայական պայմանները, տեղային ավանդույթներն ու սովորույթները՝ էկոլոգիական գիտակցության ամբողջական ուսումնասիրումը և բնութագրումը հնարավորություն կտան ավելի նպատակային կազմակերպել էկոլոգիական կրթությունը: Էկոլոգիական դաստիարակությունը՝ որպես դաստիարակության ընդհանուր համակարգի բաղադրամաս, ուղղված է դպրոցականների համակողմանի զարգացմանը և գիտական աշխարհայացքի ձևավորմանը, այնքանով, որ այն անձի գիտակցության և հոգևոր միասնության հիմքն է, քանի որ հայեցակարգային առումով մտնում է անձի գիտական աշխարհայացքի կառուցվազքի մեջ: Անձի համակողմանի զարգացման բարդ հյուսվածքում գիտական աշխարհայացքի ձևավորումն ունի իր արանձնահատուկ դերը և հնարավորություն է տալիս նրան վերախմբավորելու մարդու բազմապիսի կենսափորձը սոցիալական ակտիվ կենսադիրքի շուրջ՝ գործնական,

իմացական, հոգևոր և հուզագնահատողական նպատակով, ինչպես նաև որոշում է անձի ուղղվածության բնույթը:

Գիտական աշխարհայացքի ձևավորման գործընթացը՝ որպես դաստիարակության հիմք, կոչված է ամրապնդելու անհատի էկոլոգիական դաստիարակության բազան,կարելի է ասել, որ սոցիալ-էկոլոգիական իդեալը՝ որպես բնական միջավայր և հասարակության փոխազդեցության վերաբերյալ որոշակի կացություն, մտնում է անձի աշխարհայացքի բովանդակության մեջ:

Էկոլոգիական դաստիարակությունը, որպես մարդու համակողմանի զարգացման բաղադրամաս

1970-ական թվականներին առանձին գիտնականներ պնդում էին, որ անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը կարելի է իրականացնել դաստիարակության ընդհանուր համակարգի երեք բաղադրամասերով. Գաղափարական, բարոյական և աշխատանքային, որը իհարկե, հեռու է ճշմարտություն լինելուց: Առաջնորդվել նման կոնցեպցիայով կնշանակի. Առաջին՝ աղճատել դաստիարակության բովանդակությունը, երկրորդ՝ կտրատել դաստիարակության ընդհանուր համակարգի օրինաչափ կապերը, երրորդ՝ արհեստականորեն խոչընդոտել դաստիարակության մյուս բաղադրամասերի ուղղությամբ կրթվելու, դաստիարակվելու, զարգանալու՝ դպրոցականներին ընձեռնված հնարավորությունները, չորրորդ՝ դաստիարակության նկատմամբ չունենալ համալիր մոտեցում կամ ուղղակի հրաժարվել այդ գաղափարից:

Մշտապես պետք է իմանալ, որ անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը ենթադրում է աճող սերնդի մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագիտական, էկոլոգիական դաստիարակություն: Որպեսզի անձը նշված ուղղություններով ունենա և՛ զարգացվածություն, և դաստիարակվածություն, կարևոր է, որ այդ երկուսը ներդաշնակված լինեն մարդու անձի մեջ: Ահա սա է առաջատար նպատակը:Այդ են հաստատում աշխարհի առաջադեմ մանկավարժները, հոգեբանները, սոցիոլոգները, փիլիսոփաները, ընդհանրապես բոլոր մեծ մտածողները: Գիտատեխնիկական առաջընթացի ներկա ժամանակաշրջանը, որը առաջ է բերել բնության հավասարակշռության աննախադեպ խախտումներ, կենսոլորտի հետագա զարգացումը կախման մեջ է դնում մարդուց:Այսօր, առավել քան երբևիցե, մարդկությանը անհրաժեշտ է ազատագրվել բնության ուժերի դեմ պայքարողի՝ բնության տիրակալի բարդույթից:

Գիտնականների կարծիքով, էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը այն հիմնական ոլորտներն են, որով հնարավոր է փոխել մարդու կողմից բնության նկատմամբ այդպիսի մոտեցումը, և որի շնորհիվ մարդը կարող է հասնել աշխարհի կայուն զարգացման: Ժամանակակից աշխարհը ապրում է իր զարգացման ծանր շրջանը: Տեխնոկրատական քաղաքակրթությունը հակասությունների մեջ է մտել բնության

օրենքների հետ՝ օգտագործելով բնությունը, մարդը գերագնահատել է կենսոլորտի հնարավորությունները՝ կորցրածը վերականգնելու առումով:

Շրջակա միջավայրի վիճակի այդպիսի գիտակցումը գիտելիքների տարբեր բնագավառների մասնագետներին բերեց այն եզրակացության, որ էկոլոգիական ճգնաժամը ըստ էության, կրում է աշխարհայացքային, հոգևոր-բարոյական բնույթ:Իսկ դա նշանակում է, որ էկոլոգիական աղետի վիճակից դուրս գալու առաջին պայմանը սովորողների մոտ բնության անաչառության վերաբերյալ ունեցած պատկերացման և բնությունը, որպես զուտ կենսապահովման միջոց դիտարկելու արժեքային կողմնորոշման վերափոխումն է: Մարդիկ ծնվում և ապրում են մեծ քաղաքներում շրջապատված տեխնիկայով և արհեստական նյութերից պատրաստված իրերով, նրանք կտրված են բնական միջավայրից , որը որոշակիորեն խախտում է նրանց բարոյահոգեբանական հավասարակշռությունը, ամբողջականությունը: Բնապահպանական դաստիարակությունը սկսվում է տնից , երբ երեխան պարբերաբար շփվում է բնության հետ նրա մեջ ձևավորվում է հուզական և հիացական վերաբերմունք բնության նկատմամբ ,որի վրա հետագայում կառուցվում է նրա հոգատար ու գիտակցական մոտեցումը: Էկոլոգիա բառը հունարենից թարգմանված նշանակում է<< տուն, մարդու անմիջական շրջապատ>>: Ուրեմն ՝ ինչպիսի աշխարհում ենք ուզում ապրել , ինչպես պետք է կառուցենք սերունդների կրթությունն ու դաստիարակությունը , որպեսզի մեր ընդհանուր տունը մաքուր և ապահով լինի, և որ այնտեղ միշտ հաճելի լինի ապրել:

Բնապահպանական ուսուցման կազմակերպման ձևերը , մեթոդներն ու եղանակները

Բնապահպանական ուսուցումը բավականին բարդ և բազմակողմանի գործընթաց է , այդ պատճառով էլ պահանջում է ուսուցման գործընթացի կազմակերպական բազմազանություն , ճկունություն և համապարփակ մոտեցում : Բնապահպանական ուսուցումը սովորողին հնարավորություն է տալիս ստանալ հիմնավոր գիտելիքներ շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչների վերաբերյալ , հասկանալ բնության ամբողջականության սզբունքը , պատկերացում կազմել բնական երևույթների , բնական ռեսուրսների , բնօգտագործման և բնապահպանության մասին :

Բնապահպանական ուսուցումը կարելի է կազմակերպել և՝ անհատական, ՝ խմբային և թիմային եղանակով: Ըստ ուսուցման վայրի սենյակային և բաց տարածությունների : Ուսուցման կազմակերպման ձևերը , մեթոդները եղանակներն ու հնարները շատ բազմազան են : Բնապահպանական կրթության և դաստիարակության ոլորտում հաջողությունը մեծապես կախված է ուսուցման ճիշտ մեթոդաբանության ընտրությունից , տարբեր մեթոդների արդյունավետ զուգադումից ու կիրառումից:

Մեթոդաբանությունը մեթոդների , մատուցման ձևերի , եղանակների , և հնարների ամբողջությունն է , որը հնարավորություն կտա մատուցվող նյութը առավելագույնս ընկալելի ու համակարգված դարձնելու սովորողների համար: Երբ սկսում է աշխատել ճիշտ մեթոդաբանությունը , այդ պահից ի վեր վերանում է սովորող-սովորեցնող պատնեշը և ճանաչողական գործընթացը սովորողի համար դառնում է հաճելի ու գիտակցված:

Բնապահպանական կրթությանը ներկայացվող հիմնական պահանջներն են .

1 Սովորեցնողը պետք է լավ պատկերացնի ուսուցման նպատակը՝ ինչպիսի գիտելիքներ , հմտություններ և կարողություններ կձևավորվեն մասնակիցների մեջ , ինչպիսի կազմակերպական աշխատանքներ պետք է տարվեն հատկապես ճանաչողական գործունեության ուղղությամբ:

2 Մատուցվող նյութը պետք է լինի գիտական , բայց ներկայացվի սովորողի համար մատչելի լեզվով:

3 Պետք է տարբերակել սովորողների մտավոր զարգացածության մակարդակները և կազմել տարբերակված անհատական առաջադրանքներ:

4 Օգտագործել հավելյալ օգնող նյութեր քարտեզներ , նկարներ, գծապատկերներ, տեսաձայնագրություններ և այլն:

5 Արդյունավետ պետք է լինեն ուսուցման բոլոր փուլերը՝ մատուցում, լսում, դիտում, ընկալում , համեմատում, նկարագրում , քննարկում, տպավորությունների կիսում , հարցերի ն առաջադրում, յուրացում , ընդհանրացումներ , եզրակացություններ, ստուգում կրկնում և այլն:

Առանձնահատուկ տեղ են զբաղեցնում բնարշավները /էքսկուրսիաները/ Բնության գրկում բնության գրկում բնարշավների անցկացումը ուսուցանողի և սովորողի միջև գործնական աշխատանքի անցկացման հրապուրիչ ձև է : Բնարշավների ընթացքում աշակերտները սովորում են կողմնորոշվել տեղանքում , դիտարկել, համեմատել , տեսնել կարևորը և գիտակցել բնության օբյեկտների անհրաժեշտությունն ու ամբողջականությունը: Իրենց կառուցվածքով տարաբնույթ և միջավայրին կատարելապես հարմարված բուսական ու կենդանական աշխարհների ներկայացուցիչները որոնց կարելի է դիտարկել բնության գրկում , աշակերտների գիտակցության վրա ներգործելու , բնապահպանական գիտակցության վրրա ներգործելու , բնապահպանական գիտակցության և մշակույթի ձևավորման ազդու միջոցներ են , որոնք նրանց մոտ ձևավորում են բնության տարբեր կենսահամակարգերի մասին իրական պատկերացումներ: Յուրաքանչյուր բնարշավ մասնակցին հարուստ նյութ է տալիս գեղագիտական դաստիարակության , բնության միասնականության և փոխկապվածության գիտակցման և նրա օբյեկտների նկատմամբ խնայողական վերաբերմունքի ձևավորման համար: Տեսնելով բնության գեղատեսիլ վայրերը , աշակերտները սովորում են գնահատել գեղեցիկը, և նրանց մեջ ձևավորվում է սեր դեպի բնությունն ու հայրենիքը: Բնարշավներն ունեն շատ կարևոր դաստիարակչական և ճանաչողական նշանակություն նպաստում են աշակերտների տեսահորիզոնի լայնացմանն ու ղորացնում գիտելիքները, նրանց մեջ դաստիարակում բնության նկատմամբ հետազոտաան մոտեցում:

Շատ կարևոր է սովորողների նախապատրաստումը բնարշավներին : նրանք պետք է իմանան , թե ինչ պետք է տեսնեն բնության մեջ, ինչին պետք է հատուկ ուշադրություն դարձնեն:

Բնարշավի պարտադիր մասերից է յուրաքանչյուր աշակերտի ինքնուրույն դիտարկումներն ու եզրահանգումները: Ուսուցչի կարևոր առաքելություններից մեկն է՝ չթողնել, որ աշակերտները լինեն միայն դիտողի կամ լսողի դերում նրանց նույնպես պետք է ներքաշել աշխատանքի մեջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ էկոլոգիական դաստիարակությունը անմիջապես կախված է էկոլոգիական գիտակցության, էկոլոգիական կուլտուրայի և գիտելիքների մակարդակից: Էկոլոգիական դաստիարակությունը չափանիշ է համարվում մարդու գործնական և հոգատար վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ և այդ վերաբերմունքի համապատասխանեցումը հասարակական նորմերին:

Նպատակաուղղված մանկավարժական գործընթացի պայմաններում էկոլոգիապես դաստիարակված մարդու ձևավորումը ենթադրում է բնական և սոցիալական միջավայրի գործոնների մասին գիտական գիտելիքների օրգանական միասնություն :

Մենք, այժմ ապրում են էկոլոգիական այնպիսի ժամանակաշրջանում, ուր ամեն պահի կարելի է սպասել էկոլոգիական աղետի: Դա գլոբալ խնդիր է և վերաբերում է բոլոր ազգերին:

Հայաստանում առկա էկոլոգիական խնդիրները հասնում են մեծ չափերի:Որպես օրինակ բերենք այն փաստը, որ ընդհանուր տվյալներով յուրաքանչյուր մարդու հասնում է շատ քիչ կանաչ տարածք: Այդ տարածքները ոմանք օգտագործում են սեփական նպատակների համար, հաշվի չառնելով դրա հետագա վտանգավորությունը: Ոչնչացնում են զբոսայգիները, այն դարձնելով սրճարաններ կամ զվարճանքի վայրեր:

Կանաչ տարածքների բացակայության հետևանքով է, որ հիվանդությունների քանակը չափից դուրս շատացել է, ինչպես նաև ոչնչանում են այդ տարածքներում ապրող կենդանիների տեսակները:

Էկոլոգիական դաստիարակության գործընթացի հիմքում ընկած են սովորողների հոգեկան որակները, բնության նկատմամբ հետաքրքրությունը, արժեքային դիրքորոշումներն ու հարաբերությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրջանյան Յու.Ա., Մանկավարժություն, Երևան, 2005թ.:
2 Ասատրյան Լ.Թ., Էկոլոգիական դաստիարակության հիմունքները Երևան, 2005թ:
3 Հովսեփյան , Մարուխյան , «Անձի էկոլոգիական կուլտուրա», Երևան 2005թ:
4 Բիոսֆերա ոչ ֆորմալ կրթության ուսումնամեթոդական ձեռնարկ 2005թ: